



# ԱՄԵՆՈՒՐԵՔ ԿՆՉՈՒՄ Է ԿԱՆՉԸ ՆԵՐԳԱՂԹԻ

ԶԱՐԵՉ ՄԵԼՔՈՆՅԱՆ

## Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն



Ամ'ն անգամ երբ ծոնցա աղոթելու իմ Աստուծոյս,  
Ի՛մ տունիս մեջ, թե ի՛ր Տունի՛ն, կամ տունին մեջ օտարներուն...  
Ամե՛ն անգամ երբ խնդրեցի ազգիս համար հավատք ու հույս,  
Դուն հո՛ն էիր, և ես կարծես միայն քեզմե՛ կը խնդրեի:

Ամե՛ն անգամ երբ նայեցա մեր պատմութեան մագաղաթին,  
Տեսա հուժկու Տրդատ Արեան, հսկա քարեր ուսին վրա,  
Կը բարձրանար տաճարն ի վեր, կարծես ուսին ոչի՛նչ ըլլար,  
Ու իր մաքուր նակտին վրա ոչ մեկ քրտինք կը փալկար:

Կրկին տեսա Միածինին աղավակերպ էջը լույս,  
Քու նորաշեն ու խնկաբոյր գմբեթներուդ սրտին վրա,  
Տեսա վարեն Լուսավորչին մաքրամաքուր դեմքը բարի,  
Ու Տրդատին ժպիտը լուռ, ուր օրհնութիւն մը կը ծփա:

Տեսա ինչպես մեր ջանն անգամ կը պարուրեր քո մշուշով  
Երբ մենք հզօր աշխարհակալ թագավորներ իսկ ունեինք,  
Ու քեզ տեսա այն օրերուն երբ մենք լռած ստրուկ էինք,  
Ու քեզ համար երբ կոտորեցանք թե՛ մարդուն դեմ և թե փիղին:

Ես տեսա քեզ այս աշխարհի նամբաներուն քովն ու վրան,  
Իմ մտքովս ու հոգեատանց ժողովուրդիս հոգիին մեջ,  
Դուն հույս էիր, դուն ապակեն, դուն հավատքի փառո՛ս եղար,  
Ու մեզ բերի մինչև այս նենգ քաներորդ դարու շեմին:

Ու հիմա ո՛վ անհիշաչար ու երկնահո՛ւ պ էջմիածին,  
Լսե՛ խոսքը պաղատագին քո գաղթական բանաստեղծին,  
Լսե՛ երգը, լսե՛ հոգին, լսե՛ ողբը քաղմալեզու,  
Ու պատմե՛ զայն ձեր աշխարհի աստուածներուն ու Տերերուն:

Ըսե՛ անոնց թե ամենքս ա՛լ հյուժած ենք ու ձանձրացեր...  
Թեև մենք հոս ու ամե՛ն տեղ պիտի ապրինք ու ստեղծենք,  
Թեև պիտի կո՛ւրծք տանք միևակ, դարերուն դեմ ու աշխարհին...  
Ըսե՛ անոնց, թե ամենքս ա՛լ հյուժած ենք ու ձանձրացեր:

Ըսե՛ անոնց թե մենք հիմա կը սպասենք ձեր մե՛կ նշանին.  
Թե պատրաստ ենք, թե մենք հա՛յ ենք, տառապած ենք ու վիրավար,  
Ըսե՛ անոնց թե անկեղծ է խոսքը այս եռ՛ր բանաստեղծին  
Ախ: շո՛ւտ բռե, անապարե ով փրկարա՛ր էջմիածին:

Հայկա

# ԷԶՄԻԱՄՆԻ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՍԱԿՈՐ ԱՐՇԱԿ ԳԱԼԵՄԲԵՐՅԱՆԻ ՃԱՌԻՑ

(Արտատպանված Հայկայի Հայ Ազգ. Խորհրդի կողմն Լյուեքսարբուս սարկված Ս. Հայաստանի 25-ամյա հոբելյանական տոնակատարության հանդեսին)

Հայ ժողովուրդը, որ տառապանքի դառնազույնը ճաշակած և սակայն Մասիսի պես կանգուն ու խրոխտ մնացած է, շատ ավելի լավ կզգա ու կզնհատե այսօրվան փառապանծ տոնին վեհ նշանակությունը:

Մեր ազգային պատմությունը եթե պրպըտենք, հոն պիտի տեսնենք երկու կարևոր անկյունաքարներ, որոնք մեր ազգային ինքնապահպանման ամենեն կարևոր ազդակները եղած են: Առաջինն է հայ գրերու գյուտը, որ ազատեց մեր լեզուն ասորական, հունական և պարսկական գերութունների կրողը՝ Վարդանանց սուրբ պատերազմը, մղված զբարոյապարտ պարսիկներուն դեմ, որ վերջնականորեն փրկեց մեր սուրբ հավատքը և ինքնուրույն Ազգային Եկեղեցին: Եվ ահա կուգա ավելնալ երրորդ անկյունաքարը, որ տեղի ունեցավ 25 տարիներ առաջ, երբ հայ ժողովուրդը հասավ գերութենն ազատագրման իր դարավոր երազին:

Այս պահուն կհիշեմ պատանեկության օրերու իմ ուղեղիս մեջ անշնչելիորեն դրոշմված մաֆֆիի, հայոց ազատագրության փառափարի մեծ ռահվիրային հրեղեն գրչեն ելած հետագա բուն բաղձանքը:

Արդյո՞ք գալո՞ւ է մի օր ժամանակ Մասիսի գլխին տեսնել մի դրոշակ, եվ ամեն կողմից պանդուխտ հայազգի Դիմեն դեպ յուրյանց սիրուն հայրենիք:

Կա՞ հայ մը, որ սույն իտեալը երգած չըլլա իր երջանկության և տիրության պահերուն: Կա՞ հայ մը, որ իր հայրենաբաղձ սրտի պրկուած թելերուն մեջն թրթռացուցած չըլլա սույն աստվածային մեղեդին: Հայր իր տառապանքին, իր աքսորի ու խաչելության ճամբաներուն վրա իսկ աչքերը սեռոած դեպի Արևելք, մեր սիգապանծ Արարատին, երգեց ու երազեց հայրենիքի սերը:

Այո՞, երգեց երգեր ուղղված Արաքսին ու գեղատեսիլ Սևանին, Մասիսին ու Արագածին, Աղթամարին ու Էջմիածնին:

Երգեց, տընեցավ ու ծառայեց ընդունության դեմ, և արյունը հոսեցավ հեղեղներու պես և սակայն վերջապես, այդ արունալի եր-

կունքն ծնավ ազատ մանուկը, Անկախ Հայաստանը, շնորհիվ Թուս մեծ ժողովրդին եղբայրական օգնության:

Այս կայտառ մանուկը ուժացավ ու ծաղկեցավ այս 25 տարիներու կարճ շրջանին մեջ:

Մենք պատգամավորներս բախտը ունեցանք երթալու համբուրելու մայրենի նվիրական հողը, և սքանչանալու մեր անցյալի փառքերուն վրա, տեսնելու եղած ստեղծագործությունները, հիանալու իր կուլտուրայով և շոշափելու հայ ստեղծագործ ժողովրդի քրտնաջան աշխատանքի արդյունքը և զգալու այդ աշխատանքին ամենակարող վեհութունը:

1945 տարին ամբողջ աշխարհի և մասնավորապես հայ ժողովուրդին համար բախտավոր տարի մը եղավ: Այս վերջացող տարվան մեջ մենք տեսանք ջախջախվելը հիտլերական Գերմանիո՝ որ կսպառնար կործանել ամբողջ աշխարհի քաղաքակրթությունը և բնաջնջել փոքր ազգերը:

Մենք տեսանք Կիլիկիո ու Էջմիածնի թափուր քահանու արժանավոր գահակալներու օժոճը, և վերջապես ահա մենք կլսենք մեր սիրակարոտ Մայր Հայրենիքի սփյուռքի հայության դրկած կողը, դեպի իր կարոտալի ծոցը դառնալու համար:

Մենք խորը հավատքը ունենք թե այսքան մարտիրոսություններն և համաշխարհային այս պատերազմին այսքան զոհաբերություններ ընելն վերջ, պիտի տիրանանք մեր արդար պահանջներուն, հավաքելով սփյուռքի հայությունը ընդարձակված մայր հայրենիքին մեջ, խաղաղորեն ապրելու և շինարար աշխատանքի լծվելու համար, որպեսզի հայն ալ կարենա իր բաժինն ունենա նոր աշխարհի ստեղծման մեջ:

Թող հաղթանակի այս քսանհինգամյակը ա՛լ ավելի ոգևորե մեզ նոր թափով մը դիմակալելու բոլոր խոշորդոտները, և հասցնե մեզ նորանոր վերելքներու:

Ապրի՛ ուրեմն հիշատակը մեր բոյոր հայ նահատակներուն:

Ապրի՛ Սուրիո Արաք եղբայր ժողովուրդը,

որ մեր դժբախտ օրերուն իր ասպնջականութեամբ փրկեց մեր ժողովրդին մեկ մասը հերմակ ջարդեն:

Կեցցե մեր հայրենիք Սովետ Հայաստանը:

Կեցցե Ռուս մեծ ժողովուրդի, որուն հետ եւ հայ ժողովուրդը:

Կեցցե Սպարապետ Ստալինը: («Ժողովուրդի ձայն» դեկտ. 27 1945 թ. Պեյրոս)

### ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ան, որ ժողովրդական լայն զանգվածներու հետ շփում ունի, կտեսնե և կզգա թե ինչ մեծ տեղ կըունի Հայու հոգիին մեջ հայրենասիրութիւնը:

Թե՛ հրապարակով և թե մասնավոր խոսակցութիւններու ատեն, երբ կխոսիս հայրենիքի մասին, անսովոր հուզում մը կտեսնես քեզ լսողներու նայուածքին մեջ: Կզգաս որ կարոտի զգացումը կուտի անոնց հոգիին մեջ, դուրսի աշխարհը մոռցնել տալու աստիճան: Հոն, իրենց մտքով ստեղծած հայու հայրենիքին մեջ կապրին այդ պահուն, կըթոթափեն օտարութիւնը, կփոխադրվին մըտերիմ շրջապատի մը մեջ, ուր ամեն ինչ հայ է: Անոնց համար հայոց դարավոր կյանքը կխտանա մեկ կետի վրա ու մեկ վարկանի մեջ: Անոնց մտքին մեջ կշփոթվին Հայկը, Մեծն Տիգրանը, Վարդանը, ինչպես կշփոթվին Անին ու Երևանը: Կզգաս որ անոնց մտքին թռիչքը քու բացատրութիւններեդ անդին կանցնի. անոնք կգեղեցկացնեն ու կլուսավորեն քու պատմութիւններդ իրենց համար ընդունելի դուրսական աշխարհի մը վերածելով Հայրենիքը: Ուրիշ կերպով անհասկանալի է հայրենասիրութիւնը: Պաշտամունքի բարձրութեան հասած իրականութիւն մը միշտ գեղեցիկ է ու շքեղ: Անոր թերի ու տկար կողմերը միշտ աննշան են ու սրբագրելի, ու ան իր տկարութիւններով և թերութիւններով չէ որ կերևա, այլ իր առավելութիւններով և դրական կողմերով: Հայաստանը՝ հայ մարդուն, հայ հայրենասիրին համար կախարդական էութիւն մը ունի: Իր բնութիւնով անմահ գեղեցկութիւն մը, իր պատմութեամբ՝ մեծահարուստ գանձարան մը, իր մարդոցմով՝ աշխատասեր ու ստեղծագործ ուժ մը, իր մշակութիւնով և քաղաքակրթութեամբ՝ օրինակելի աշխարհ մը: Այնտեղի դժվարութիւնները վաղանցով են ու տանելի, իսկ վայելքները դուրսական աշխարհի մը հմայքն ունին:

Անոնք որ անկե դուրս ապրելու դատապարտված են, ծանր գրկանքի մը տառապանքը ունին, իրենց աչքերը հոն հռոած են ու կմրկին հոն ապրելու տենչանքով:

Սխալ ու շիտակ, լավ ու վատ՝ շատ բաներ լսած են հայրենիքի մասին: Մտիկ կընեն բոլոր ըսուածները, բայց կհամատան միայն գովասանքին: Անոնց հոգիին մեջ զգացական հայրենիքը տիրապետող է. իրականը չի կրնար զգացականին տարբեր ըլլալ: Անխարդախ ու անշահախնդի հայրենասիրութիւնն է այս, որ կրնա առաջնորդել մեծագույն զոհողութիւններու և նվիրումի:

Մեր հայրենիքին ո՞ր ուժն է, որ հաշողած է այսքան զորեղ կերպով հմայել տալագիր հոգիները: Բացառիկ բովանդակութիւն մը ունի հայուն համար այդ հայրենիքը: Ան չի ներկայանար միայն իր հողի տարածութեամբ, իր հարստութեամբ, իր կյանքի նյութական և բարոյական տվյալներով, այլ խոսացած ուժ մըն է, ապագա կարելիութիւններով մանավանդ հարուստ ու գաղափարական արժեքով՝ մեծ ու ճոխ: Երկար տարիներ անոր երազովը ապրած ենք, քանի մը անգամ մոտեցած ենք անոր տիրանալու երանութեան. հիմա կտեսնենք որ մեկ մասը մեր ժողովուրդին հոն ապրելու վայելքին արժանացած է ու այս պահուն կզգանք որ մոտ ապագային մեզի ալ կրնա վիճակվիլ նույն բախտը: Ու անհամբեր ենք, փուշի վրա նստող մարդոց պես:

Հայրենասիրական այս տրամադրութիւնը համատարած երևույթ է: Մեծ քաղաքներու թե փոքր շրջաններու մեջ, առևտրականին թե աշխատավորին մոտ: Բազմաթիւ էին անոնք, որոնք կուզեին Հայաստանը տեսնող աչքերը համբուրել և անթիվ՝ անոնք որ Հայաստանեն հիշատակ մը՝ քարի մը կտոր կամ ափ մը հող ունենալ կփափաքեին: Հայրենիքի հանդեպ սնուցած այս բուն ըզգացման ի տես, անկարելի է զսպել հուզումը:

Միշտ ալ հայրենասեր եղող մեր ժողովուրդին զգացումները երբեք այս սաստկութեան մեջ չէի տեսած: Մինչև ներկա պատերազմի հաղթական վախճանը, հայրենասիրութիւնը ինքզինքը ուտող և սպառող ուժ մըն էր. իր գոհացումը չգտնելու դատապարտված ըղձանք մը: Իր էութեամբ, հիմա, հիմնապես փոխված է և հավատա-

վոր մարդոց հատուկ կենդանի և շարժիչ ուժի մը կերպարանքը ստացած։ Պիտի ուզեի, որ մեր հայրենիքի վարիչները և աշխարհի բոլոր դիվանագետները սենսեին մեր ժողովուրդին ցուցադրած այս զգացումները։ պիտի ուզեի, որ թյուրքերն իսկ հասկնային զայն, որպեսզի ըմբռնեին, թե ի՞նչ տեղ կգրավե հայրենիքը մեր կյանքին մեջ։ Մեր գոյության իմաստն է ու միակ նպատակը՝ մեր կյանքին։ Մենք չենք կըրնար ապրիլ այլևս առանց հայրենիքի։ Կը-

բաշկուտենք մեր օրերը, անոր հասնելու համար։ Թերթեր կկարդանք, դիվանագետներու գործունեության կհետևինք սրտատրոփ, մեր մեկնումի օրուան սպասելով այնչիտ։ Ու կհավատանք, որ պիտի տրվի մնդի այս անգամ մեր հայրենիքը։ կհավատանք այլևս չթաղել մեր մարմինը օտար հողերու տակ։ կհավատանք ապրիլ ու մեռնիլ մեր երկնքի արևին ու աստղերուն տակ։

ԼԵՎՈՆ ՉՈՐՄԻՍՅԱՆ  
(«Արևմուտք» թիվ 34 1945 թ. Փարիզ)

**Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ս**

**ՏՈՒՆԴԱՐՁ**

Եր մոտենեմ... անա՛ դռներդ կը բացուիմ, մի՛րհան դիզված կարոտ ունիմ արտիս մեջ, Պիտ արտասուեմ ես հուզումես ցեմազին Այն վարկյանին երբ աչքես տեսնե՞լ հեզ։

Պիտ հեռանամ այլուրի լայս պիտե՞ն Ջանք հույսիս միշտ պիեղ բռնած ափս մեջ եվ պիտի գամ ո՛վ հայրենիք, ծնւապի։ Քու խորանիդ առջև վառել զայն, անմար Ջանիդ լույսեն, և արտիս խոր ու մքին Անկյուններն ու խորշեր հրդեհե՞լ։

Պիտ հեռանամ այս անծանոթ ափերեն, Մոտ է ժամը անվերադարձ մեկնումիս, Ի՛նչքան ուժեղ է պատկերդ լուսեղեն, մը կը գերե հայրենաբաղձ իմ հոգիս։

Կը մոտենեմ... անա՛ դռներդ կը բացուիմ, Բազում դիզում անմեռ կրակ արտիս մեջ, Պիտ արտասուեմ ես հուզումես խուլաբար Այն վարկյանին երբ աչքես տեսնե՞լ հեզ։

ՀՈՎՍԵՓ ԹԵԿԷՐՅԱՆ

ԽԱՐԹՈՒՄ (ՍՈՒԴԱՆ)  
(«Արաբ», հունվար 26 1946 թ.)

**Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ն Չ Ա Յ Ն Ը**

Սփյուռքի հայության ականջին ոչ մեկ ձայն այնքան անուշ կհնչե, որքան մայր հայրենիքի ձայնը, որ սկսած է հնչել։ Մեր բաղջր հայրենիքը, մայր Հայաստանը, դարավոր գերութենե և ստրկութենե հնչող, հաշողեցավ փշրել իր շղթաները և վերածնիլ առույգ ու կայտառ, ավելի քան երբեք։ Մեր հայրենիքը այսօր ո՛չ թշվառ է և ոչ ալ անտեր, ինչպես որ վարժված էինք երկար տարիներ ի վեր երգել։— «Մեր հայրենիք, թշվառ անտեր։ Այո՛, էր երբեմն, բայց այսօր անցած են թշվառության և անտերության տարիները։ Այսօր վերջ գտած է թըշվառութունը՝ շնորհիվ հայ քաջակորով բազուկներու կատարած նվաճումներուն։ Այսօր անտեր չէ մեր հայրենիքը՝ շնորհիվ սովետ ժողովուրդներու եղբայրակցության և քաջամարտիկ հայ զորականներու։

դած է իր տարադիր զավակներուն՝ վերադառնալու իր ծոցը և լծվելու վերաշինության գործին, ինչ որ ամեն հայու սրբազան պարտականությունն է։ Հայրենասիրությունը պետք է գործնական ըլլա և կամ գործով պետք է հաստատվի, ապա թե ոչ ան կամա զգացում և խոսք, ինչ որ ոչ մեկ օգուտ կբերե հայրենիքին։

Ուրեմն ժամանակը եկած է երգելու։—

«Իմ Հայրենիքը գիս կը կանչե,  
չեռու եմ Հայաստանեն,  
Հայու որդվույն կը վայելե՛  
չեռու մեալ Հայաստանեն»։

Ոչ, հայու որդվույն չի վայելիւր Հայաստանեն հեռու մնալ և քաջըջել թափառական հայու անստույգ և անորոշ կյանքը։ Հայու որդվույն կվայելի ընդունիլ հայրենիքին հը-

Այս հայրենիքն է, որ այսօր հրավեր ուղ-